ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄԵՑՈՒ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շ. Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Հայ ուսուցողական (դիդակտիկ) բանաստեղծությունն ունի զարգացման հարուստ պատմություն։

Ուսուցողական բանաստեղծությունները, լայն առումով, այսինքն՝ տարատեսակ, բազմաբնույթ՝ պարզից-ամենաբարդ, խրատականից-դիտական որոշակի հարցեր շոշափող չափածո երկեր (բանաստեղծորեն հաչող կամ անհաչող), որոնց նպատակն է «չափածո ձևի դյուրին եղանակով դիտելիքներ տարածել, ուղղություն տալ ընթերցողին զանազան հարցերում», մեզանում երևան են եկել տակավին միջին դարերից։ Միջնադարյան հայ դրականությունը լի է նման չափածո երկերով։ Այդպիսի երկերի հեղինակները եղել են ոչ միայն բանաստեղծները, այլև պատմագիրները, փիլիսոփաները, վարքագիրները, ժամանակագիրները, հիշատակագիրները, գրիչները և այլք։ Ոտանավոր շարադրանքը, նաև ուսուցողական նկատառումներով, մի շատ տարածված, սովորական ձև է եղել ողջ հայ միջնադարում, ներառյալ նոր ժամանակները[1]։

Անցյալից մեզ հայտնի ուսուցողական առաջին բանաստեղծությունը պատկանում է Գրիգոր Մագիստրոսի (990—1059) գրչին։ Նրա «Հազարտողեանը» ներկայացնում է հին և նոր կտակարանների համառոտ բովանդակությունը, նույնահանգ տողերով չափաբերված։ Գիտնական բանաստեղծը իր երկի վերջում անդրադառնում է նաև հայ եկեղեցու պատմությանը, գրերի գյուտին և թարգմանիչներին։

Սակայն բուն ուսուցողական բանաստեղծության բուռն զարգացումը մեզանում սկսվում է XII—XIII դդ.՝ հայ մշակույթի, գրականության վերելքի, աշխարհիկ կյանքի աշխուժացման եռուն շրջանում։ Այդպիսի բանաստեղծության ամենախոշոր ներկայացուցիչը Ներսես Շնորհալին է (1102—1173)։ Նրա գրական վիթխարի ժառանգության չափածո հատվածի զգալի մասը ուսուցողական բազմատեսակ բանաստեղծության ընտիր նմուշներ են։ Մ. Աբեղյանը նշում է, որ «Ներսես Շնորհալին արվեստի և գրականության վրա նայում է ամենից առաջ ձևական և դիդակտիկական-ուսուցական տեսակետներով»[2]։ Դա միջնադարյան հայ գրականության ամենաբնորոշ գծերից մեկն է։ Ուսուցողական, կրթական և միաժամանակ հույզի և հույսի, գոյապայքարի, մաքառման բանաստեղծություն է եղել միջնադարյան հայ բանաստեղծության լավագույն մասը։

---

[1] Հայ նոր, կլասիցիստական ուսուցողական բանաստեղծության հարցին առանձին հոդվածով անդրադարձել է Է. Ջրբաշյանը («Դիդակտիկ պոեմները հայ գրականության մեջ», «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1)։ Նրա այս հոդվածը նոր խոսք է հայ ուսուցողական բանաստեղծության մասին։

[2] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Բ, Երևան, 1946, էջ 81։

XII—XVIII դդ. հայ ուսուցողական բանաստեղծությունը ընդհանուր բովանդակությամբ կարելի է բաժանել երեք խմբի։

Առաջին խմբի մեջ են մտնում բնական գիտությունների, տիեզերքի ճանաչողության՝ երկնքի, երկրի, աստղերի, արեգակի, տոմարական հաշվումների, ինչպես նաև այլ դիտությունների և արվեստների վերաբերյալ ոտանավոր երկերը։ Այդպիսիներից են, օրինակ, Ներսես Շնորհալու «Յաղագս երկնից և զարդուց նորա», Հովհաննես Երզնկացու «Յաղագս երկնային զարդոց», Սարգիս Խլաթեցու «Ոտանաւոր տումարի», Առաքել Սյունեցու «Պատմութիւն վասն երկոտասան հողմոց», Ղուկաս Եկեղեցու «Պատճէն Հռոմայ մեծ տումարի ոտանաւոր ձևով», Հովասափ Սեբաստացու «Ոտանաւոր վասն անփոփոխ եղանակաց», «Վասն եօթ մոլորական աստեղացն», Եփրեմ վարդապետի «Յանկ և ցուցակ յայսմաւուրաց գրոց ի վերայ երկոտասանց ամսոց պարզեալ, շարադրեալ ոտանաւոր չափով», Օսայի Կաֆայեցու «Յաղագս տումարական մանկացութեանց» և այլն, և այլն։ Առավել շատ ուսուցողական բանաստեղծություններ են գրվել մեզանում տոմարի վերաբերյալ։

Ուսուցողական բանաստեղծության երկրորդ խմբի մեջ են մտնում բարոյագիտական, գիտա-մանկավարժական, ուսումնակրթական չափածո երկերը. այդպիսիք են Ներսես Շնորհալու «Բան ներտաղական և խրատ հոգւոց համայնից ի դիմաց մերոյին տառից տանց յիւրաքանչիւրսն քառից», «Խրատ ուսումնականաց մանկանց ի դիմաց այբուբենից տառից ոտանաւոր տաղիւ չափոյ», Գրիգոր Տղայի, Ֆրիկի, Հովհ. Երզնկացու, Խաչ. Կեչառեցու, Մկ. Նաղաշի, Առ. Սյունեցու, Առ. Բաղիշեցու, Նազարեթ Տաղասացի, Զաք. Գնունեցու, Մարտիրոս Ղրիմեցու, Նաղաշ Հովնաթանի և այլոց խրատական համապատասխան բանաստեղծությունները։

Ուշագրավ է, որ XII—XIII դդ. չափածո ձևի մեջ ընդլայնվում են V—XI դդ. ստեղծված եկեղեցական, բարոյագիտական, կանոնական և պարականոն խրատական-ուսուցողական արձակ գրականության սահմանները։ Այս խնդրում վճռական դեր է խաղում Ներսես Շնորհալին։

Ուսուցողական բանաստեղծության երրորդ խումբը ներկայացնում են պատմա-կրոնական, եկեղեցա-քաղաքական բովանդակությամբ բազմաթիվ չափածո երկեր. այդպիսիք են Ներսես Շնորհալու «Շարագրութիւն հոմերական վիպասանութեամբ սակս հայկազանց սեռի Արշակունեացն զարմի ի սկզբանց մինչև ի վախճանս», Վահրամ Ռաբունու «Պատմութիւն Ռուբինեանց», Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղետից», Առ. Սյունեցու «Ոտանաւոր շարադրեալ յաղագս Աստուածաշունչ գրոց», Մովսես քահանա Արծկեցու «Ոտանաւոր պատմութիւն Ջիհան շահի և Ուզուն Հասանի պատերազմաց», Սիմեոն Ապարանցու «Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի Մամիկոնեանցն սեռի», Իգնատիոս Տիգրանակերտցու «Համառօտութիւն պատմական և տաղաչափական ոտիւք յաղագս արևելեան և պարսից աշխարհի աւերման ի ձեռանէ օսմանցւոց», Մարտիրոս Ղրիմեցու «Կարգ և թիւ թագաւորաց ազգիս հայոց» և այլն։

Հայ ուսուցողական բանաստեղծության մի պատկառելի մասը կազմում են պատմա-կրոնական, եկեղեցա-քաղաքական և բարոյագիտական բովանդակությամբ ոտանավորները։ Եվ դա հասկանալի է։ Հայ հասարակական մտքի մշակներին անցյալում առաջին հերթին մտահոգում էին ժամանակակից սերնդին հայ ժողովրդի և եկեղեցու պատմությանը հաղորդակից անելու,

նրանց բարոյակրթական վիճակը բարձրացնելու, նրանց մեջ հավատքի և հայրենիքի սերը վառ պահելու հարցերը։ Ուստի դասական պատմության, փիլիսոփայության և այլ գիտությունների զարգացմանը զուգահեռ, նրանք, XII—XIII դդ.-ից սկսած, նույն գիտությունների առանձին հարցեր վերաշարադրում էին ոտանավոր ձևով, դրանց շուրջ հյուսում ուսուցողական, պարզունակ բանաստեղծություններ.

Սկրսանելով յայսրմ տառի,
Ի նախահարսն իմ ըստ կարգի,
Թէ ո՞րք էին, և կամ ուստի՞,
Եւ կամ յորո՞ւմ ժամանակի.
Եւ մակագրեալ ի Բարտիսի,
Զառ ի նոցայն գործեալ իրի,
Զոմանց պատմել յոյժ կենդանի,
Զարիուրիւնն պանծալի,
Զոմանց նառել զգործս անբարի.
Եւ ավատ անունսրն յաշխարհի[3],—

գրում է Շնորհալին իր «Վիպասանութեան» նախերգանքում։ Դա առաջին չափածո պատմական ուսուցողական երկն է, ուր հեղինակը, հետևելով Խորենացու պատմությանը, ութվանկյա նույնահանգ տողերով շարադրում է հայ ժողովրդի պատմությունը, սկսած Հայկազյան շառավիղներից մինչև Պահլավունիները։ Ուշագրավ է, որ Շնորհալուն շարունակում է Վահրամ Ռաբունին, և այնուհետև պատմական շատ դեպքերի ու իրադարձությունների շուրջ հորինվում են նմանօրինակ այլ երկեր։

Միջնադարյան հայ ուսուցողական բանաստեղծությունը ամբողջությամբ նույն ժամանակաշրջանի անհատական և ժողովրդական գունագեղ բանաստեղծության բաղկացուցիչ մասն է։

Ի տարբերություն կլասիցիստական ուսուցողական բանաստեղծության, միջնադարյան հայ ուսուցողական բանաստեղծությունը թեև մշակված, պարտադիր տեսական օրենքներ չունի, և այդ բնական է, սակայն գրական մի շարք ընդհանուր ձևերի մեջ պարզաբանում, բացատրում, ներկայացնում է հայ ժողովրդի պատմության, եկեղեցու, բնական և արվեստական այլ գիտությունների առանձին հարցեր, ուսուցանում է պարզից ամենաբարդը՝ հայկական այբուբենից սկսած մինչև տիեզերքի կազմավորման խնդիրները։

Հայ ուսուցողական բանաստեղծությանը (ինչպես ընդհանուր ուսուցողական բանաստեղծությանը)[4] բնորոշ է պարզունակ արվեստը՝ մատչելի լեզու, պատմողական, նկարագրական, մտերմիկ ոճ, տաղաչափության և հանգավորման միօրինակ ձևեր և նշանակներ, կառուցվածքային պարզ ուղեձգություն և այլն։ Չափածո այս երկերը, մեծ մասամբ, զուրկ են գեղարվեստական ընդհանրացումներից, տիպական հանգամանքներից և տիպական կերպարներից։ Այդ երկերում առաջին գծի վրա է կանգնած ինքը՝ հեղինակը, նա իր գաղափարական անհատականությամբ, երբեմն զգայացունց միջամտություններով կամ ողբական, ներբողյան գունազարդումներով, հիմնականում ռիթմիկ տաղաչափությամբ ազդում է ընթերցողի վրա և կողմնորոշում նրան։ Միջնադարյան հայ մշակույթի զարգացման նախանձախնդիր այդ գործիչներին հետաքրքրում է առաջին հերթին ոչ թե գեղեցիկ, բարձրարվեստ բանաստեղծություն ստեղծելը, այլ ուսուցման համար բանաստեղծության չափական ձևի

---

3 Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 541։

4 Տե՛ս Ա. Առաքելյան, Հունական գրականության պատմություն, Երևան, 1946, էջ 67։

ընձեռած դյուրին հնարավորությամբ հայ ժողովրդի հոգևոր կրթության գործին նպաստ բերելը։ Կիրակոս Թալինեցին (գրիչ, տաղասաց, տոմարագետ, XVII—XVIII դդ.), օրինակ, գրում է, որ ինքը Եսայի Ռաբունու տոմարական առանձին երկեր չափաբերել է՝ 1. «Որպեսզի ծնողքն բերանով ուսանել կարին։ 2. «Որ դիւրին ուսանին մանկունք»։ 3. «Որ [նոքա] բերան առեալ միշտ երգին»։ 4. «Որ ոչ կարօտին դիրք տեսանել»։ 5. «Որ առանց օրինակի կարին գրել և չսխալին»[5] և այլն։

Միջնադարյան հայ ուսուցողական բանաստեղծությունը բխում է հայ կյանքից, օգնում է լուսաբանելու հայ ժողովրդի կյանքի համակողմանի պատմությունը։

X—XVIII դդ. ստեղծվել են ուսուցողական չափածո և՛ մեծածավալ երկեր՝ պոեմներ (այս բառի պայմանական հասկացողությամբ), և՛ փոքրածավալ ամբողջական բանաստեղծություններ, և՛ քառյակներ, երկտողյակներ, հանելուկատիպ փոքրիկ բանաստեղծություններ։ Չափածո այդ երկերը մեզ հասել են՝ պատմություն, շարագրություն, վիպասանություն, հիշատակարան, տաղ, ոտանավոր և այլ անվանումներով։

* * *

Է. Ջրբաշյանի «Դիդակտիկ պոեմները հայ գրականության մեջ» հոդվածում հիշատակված բանաստեղծությունները (XVIII դ. վերջի և XIX դ. առաջին կեսի) կազմում են միջնադարյան ուսուցողական բանաստեղծության մեծ շղթայի նոր օղակը՝ դասական օղակը։ Այդ նորը, իրավամբ նկատում է Է. Ջրբաշյանը, իր վրա կրում է արևմտաեվրոպական գրականության, կլասիցիզմի ազդեցությունը. «Ստեղծելով իրենց «դիդակտիկ պոեմները», հայ դասականները հետևում էին գրական այն ավանդույթին, որն սկիզբ էր առել անտիկ գրականությունից և վերակենդանացվել XVII—XVIII դդ. եվրոպական կլասիցիզմի կողմից»[6]։

Սակայն թե ե՞րբ և ինչպե՞ս է սկիզբ առնում այդ նորը, կլասիցիստականը—դա երկրորդ կարևոր խնդիրն է, որին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ դարձյալ սեղմ, հարցադրումների եղանակով։

XVIII դ. վերջի և XIX դ. սկզբի մխիթարյան և ոչ-մխիթարյան բանաստեղծներից շատ առաջ, «անտիկ գրականության ավանդույթները վերակենդանացնող եվրոպական կլասիցիզմի ազդեցությամբ», հայ գրականության մեջ արդեն ստեղծվել էին ուսուցողական բանաստեղծության բազմաթիվ նմուշներ. սակայն ոչ միայն անտիկ գրականության ավանդույթները վերակենդանացնող եվրոպական կլասիցիզմի ազդեցությամբ... Ստեղծելով ուսուցողական բանաստեղծություն, հայ նոր դասականները, այդ թվում նաև Մխիթարյանները, հետևում էին նաև անցյալի ազգային հարուստ գրականությանը. յուրացնում էին նաև իրենց նախնիների փորձն ու գիտելիքները՝ միաժամանակ ընդունելով օտար աշխարհից եկող մշակութային նոր շարժման ալիքը։

Նոր ժամանակներում ուսուցողական բանաստեղծության կամ «վարդապետական քերթողության» առաջին խոշոր ներկայացուցիչը Խաչատուր

---

[5] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3469, 1702, թ. 95ա։

[6] Է. Ջրբաշյան, Դիդակտիկ պոեմները հայ գրականության մեջ. «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 53։

էրզրումեցին է (նաև Կարնեցի, Առաքելյան, ծնվել է 1666 թ. Կարինում, վախճանվել է 1740 թ. Վենետիկում)։ Էրզրումեցին եղել է Մխիթար Սեբաստացու (աբբահոր) մտերիմ բարեկամը և աջակիցը. «Երկուքն ալ հմուտք և գիտնականք, անխոնջ գրողներ, բայց զանազան ճանապարհներով հասել են նույն նպատակին,—կարգում ենք «Վարք Մխիթարա Սեբաստացվո» գրքում,—Խաչատուր Հռովմ կերթա ուսանելու լեզուների և գիտությունների հմուտ վարդապետաց ձեռքին տակ, Մխիթար առանց գպրոցի և վարժապետի հասել է Խաչատուրին...»։

Մի կողմ թողնելով միաբանության գործնական աշխատանքները, Խ. Էրզրումեցին ամբողջովին իրեն նվիրում է գիտությանը և XVIII դ. առաջին տասնամյակներում, մեկը մյուսի ետևից հրապարակ է հանում գիտական, տեսական, փիլիսոփայական, քերականական, աստվածաբանական այնպիսի աշխատանքներ, որոնք հռչակում են նրա անունը. Խաչատուր վարդապետը գրական այնպիսի պաշար և հմտություն ուներ,—շարունակում են վերոհիշյալ գրքի հեղինակները,—«որո համար անոր խոսքը իբրև պատգամ կնդունվեր արևելքին մեջ. ուր որ համբավը լսված էր։ Բայց քան ուրիշ ամեն տեղ, մեծ էր անոր անունը և ազդեցությունը Հռովմա մեջ, մեր ազգին և ընդհանուր արևելքին քրիստոնեից»[7]։

Լեոն նշում է, որ Խ. Էրզրումեցին առաջին հայ գործիչն էր, որ միջնորդ հանդիսացավ արևմտյան գիտության և հայության մեջ։ «Գիտությունների մի ամբողջ ժողովածու, մի ամբողջ հանրագիտակ,—գրում է Լեոն Խ. Էրզրումեցու «Համառոտական իմաստասիրութիւն» գրքի մասին,—որի վրա հայ ընթերցողը պիտի խելամուտ լինի այն ամենին, ինչ տալիս էր եկեղեցուն ստրկացած փիլիսոփայությունը։ Մեծ չէր այդ հարստությունը համամարդկային առաջադիմության տեսակետից, բայց հայկական աղքատ ու տգետ իրականության համար մի մեծ բարիք էր, որովհետև, այնուամենայնիվ, եվրոպական միտք էր ներկայացնում և տալիս էր այնպիսի հասկացություններ, որոնք բոլորովին անհայտ նորություններ էին այն ժամանակվա կացության մեջ»։ «Այս նշանավոր աշխատությունը,—շարունակում է Լեոն,—ինչպես և Խաչատուրի մյուս գործերի մեծ մասը ազգի սեփականությունը դարձան XVIII դարում»[8]։

Վ. Թերզիբաշյանը, աչքի առաջ ունենալով Խ. Էրզրումեցու «Յաղագս բանաստեղծութեան» տրակտատը, գրում է. Էրզրումեցին իր «...պոետիկայի մեջ բացահայտորեն ներշնչված է իր դարաշրջանի կլասիցիզմի ոգով և նրա փայլուն տեսաբան Բուալոյից...»։

1711 թվականին Էրզրումեցին Վենետիկում հրատարակում է վերոհիշյալ «Համառոտական իմաստասիրութիւն» կամ «Բովանդակութիւն ամենայն ուսմանց» ստվարածավալ երկհատորյակը, որի վրա նա աշխատել էր սկսել դեռևս 1695—1696 թվականներից։ «Քանզի ամենայն մակացութիւն է ընդունելի և սիրով ընդդրկելի,—գրում է Խ. Էրզրումեցին իր գրքի հիշատակարանում,—և քանզի ամենայն արուեստ է յինքենէ շահաւէտ և օգտակար և զայս իմաստասիրական գործս, որ գրկէ զարուեստս և զգիտութիւնս, իմաստասիրութեան

---

7 Հ. Հովհաննիսյան, Վ. Թորոսյան, Վարք Մխիթարայ Սեբաստացւոյ, Վենետիկ, 1901, էջ 357, 358, 537։

8 Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, էջ 976։ Նույնի՝ Հայկական տպագրություն, Թիֆլիս, 1902, էջ 173։

9 «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 2, Երևան, 1962, էջ 104։

ձերում յանձն առնեմ և խնդրեմ ի ձենջ, զի խոնարհեցեալք պտղաբերաբար զնա վայելեցէք»[10]։

Թվում է թե հին և միջին դարերում ստեղծված հայ գիտա-փիլիսոփայական վիթխարի գրականության վրա նոր բան չպետք է ավելացներ Խ. Էրզրումեցու վերոհիշյալ գիրքը։ Սակայն այդպես չէ. Խ. Էրզրումեցին առաջին անգամ, անհամեմատ լայն ծավալով ու ամբողջական տեսքով, գիտության, փիլիսոփայության և արվեստի հիմունքները շարադրում, զարգացնում, վերարծարծում է նոր ձևով ու եղանակով։ Ի տարբերություն իր նախորդների, նա մշակում է կանոններ, օրենքներ, գծում է սահմաններ՝ դիմելով ամենաբարդ զաղափարները մատուցելու համեմատաբար դյուրին եղանակին՝ չափածո խոսքին՝ «...որպէսզի ամենեքեան դիւրապէս կարիցեն վայելել զուսուցեալսն ի սմին ի յօգուտ անձանց իւրեանց»[11]։

Էրզրումեցու «Համառոտական իմաստասիրութիւն» գրքի առաջին հատորի համար (738 էջ) ուսուցողական չափածո երկի նյութ են դարձել արվեստի, գրականության, բանաստեղծության, հռետորության, տրամաբանության, ֆիզիկայի, երկրի ծննդյան և ապականության, չորս տարրերի, բուսականության, կենդանիների, մարդու, բժշկության, բարոյականության և բարոյական գիտության, քաղաքականության հարցերը։ Հեղինակի նույն գրքի երկրորդ հատորի համար (678 էջ) ուսուցողական բանաստեղծության նյութ են ծառայել մաթեմատիկայի, թվաբանության, երկրաչափության, աստղաբաշխության, երաժըշտության, ընդհայեցողության, կշռորդաբանության, մետաֆիզիկայի խընդիրները։

Այս հիմնական առարկաներից յուրաքանչյուրը կազմում է «Համառոտական իմաստասիրութիւն» գրքի առանձին բաժին, իսկ ամեն մի բաժին իր հերթին տրոհվում է բազմաթիվ գլուխների ու ամեն մի գլուխ ստանում է իր վերնագիրը։ Ամենաընդարձակը «Յաղագս աստղաբաշխութեան» բաժինն է, որն ունի 86 գլուխ։ Էրզրումեցու չափածո երկհատորյակի ամեն մի գլուխ իրենից ներկայացնում է 100-ից ավելի կամ պակաս քանակությամբ 16 վանկանի տողերով (հատածով), ներքին հանգավորմամբ, նույնահանգ բանաստեղծություն։ Դրանք իրենց արվեստով հիշեցնում են միջնադարյան ուսուցողական, պարզունակ չափածո երկերը.

Աստղաբաշխութիւն գիտութիւն և գիտական ճանաչութիւն,
Որ զերկնից խօսի, ընձեռնէ և զաստեղաց վարդապետէ,
Յորժամ զբնութենէ ճատէ, զյատկութեանց նոցին ընձեռնէ,
Ձներգործական զօրութենէ, զնոցին կարողութենէ[12]։

Կամ՝

Որ մետափիսիկա ասի, բառ յունական ենթակայի,
Նաև այլազգաբար գրի, մեթաֆիսիքա գծագրի,
Եթէ հայկական լինիցի, անդրաբնական առ ասի,
Այս, որ մետափիսիկա է, անդրաբնականաբան է[13]։

---

10 Խաչատուր Էրզրումեցի, Համառոտական իմաստասիրութիւն, հատ. 1, Վենետիկ, 1711, տե՛ս հիշատակարանը։

11 Նույն տեղում, հատ. 2, Վենետիկ, 1711, էջ 687։

12 Նույն տեղում, էջ 295։

13 Նույն տեղում, էջ 547։

Հաղցի բերումով մեզ այստեղ հետաքրքրում են միայն Խ. Էրզրումեցու ուսուցողական բանաստեղծության ընդհանուր ընդգրկումները և նրա «Յաղագս սահմանի բանաստեղծութեան» երկը որպես տեսական-ուսուցողական բանաստեղծության մի ցայտուն նմուշ։ Դրանցով Էրզրումեցին սկզբնավորում է հայ նոր, կլասիցիստական ուսուցողական բանաստեղծությունը և միաժամանակ (պոետիկայի վերաբերյալ գրած առնակ հոդվածների հետ միասին) սկզբնավորում հայ կլասիցիստական բանաստեղծության տեսությունը։

Էրզրումեցու «Համառոտական իմաստասիրութիւն» բանաստեղծության երկհատորյակը ծրագրային հանրագիտարան է՝ «ազատական» և ոչ «ազատական», այսինքն՝ նաև ծառայական արվեստների, «տեսական» և ոչ «տեսական», այսինքն նաև արարողական, գործնական գիտությունների հիմունքների (անցյալ-անցյալ) առաջին ոտանավոր խոշոր շարադրանքը՝ նոր ժամանակներում։

Կլասիցիստական գրական ուղղության հայ տեսաբանը, կրելով հանդերձ Բուալոյի գրականագիտական հայացքների ազդեցությունը, ստեղծում է բանաստեղծության յուրօրինակ տեսություն՝ ելնելով իր ժողովրդի գրական կյանքի անցյալի և ներկայի վիճակից։ Խ. Էրզրումեցին գրում է այսպես կոչված պոետիկա՝ բանաստեղծության արվեստ, բանաստեղծության տեսություն նեղ իմաստով։ Այսինքն՝ գեղարվեստական գրականության երեք հիմնական ճյուղերից նա բնորում է, առաջին հերթին, բանաստեղծությունը։ Սա ևս միանգամայն բնական է, քանի որ, բանաստեղծությունն է հայ գեղարվեստական գրականության ամենահին, ամենազարգացած ու ամենատարածված գրական տեսակը։ Հայ բանաստեղծությունն է, որ ունի անհամեմատ հին, հարուստ և ձևավորված պատմություն։

Բանաստեղծության արվեստի վերաբերյալ Խ. Էրզրումեցու տեսական երկերը («Յաղագս բանաստեղծութեան», «Յաղագս ենթակայի բանաստեղծութեան», «Յաղագս սահմանի բանաստեղծութեան») թեև մասամբ կրկնում են միմյանց և բավականաչափ վերացական են, մասամբ նաև հակասական, քանի որ հենց կլասիցիզմը վերացական ու հակասական շատ բան ունի իր մեջ, սակայն, այնուամենայնիվ, զարգացնում և հիմնավորում են առանցքային երկու թեզիս։ Դրանցից առաջինը վերաբերում է բանաստեղծության դերին, նպատակին, առարկային, նյութին, բովանդակությանը, երկրորդը՝ բանաստեղծության արվեստին՝ կառուցվածք, արտահայտչական ձևեր և եղանակներ, հնարանքներ, լեզու և ոճ, հանգ, չափ և այլն։

Ըստ Էրզրումեցու բանաստեղծությունը բարձր «վսեմական և ազատական» արվեստ է։ Հնարագիտություն, որ «ստանի ի ձեռն զման և ուսման»։ Եվ ինչպես բոլոր արվեստների, այնպես էլ բանաստեղծության ենթական, առարկան, ապրյուրը, հիմքը մարդկային միտքն է, բանականությունը։ Արվեստները,—շարունակում է Խ. Էրզրումեցին,—ուժ ու գորություն ստանալով մարից, իրենք իրենց հերթին ազդում են մտքի վրա։ Նպաստում են մարդկային մտքի առաջադիմությանը, զարգացմանը[14]։

Էրզրումեցին, բնականաբար, բանաստեղծության արվեստի նյութ է համարում նաև ասավածաբանությունը, իմաստասիրությունը, և այս դեպքում նա անգամ քիչ դեր է տալիս բանաստեղծի երևակայությանը, պահանջում է

14 Խ. Էրզրումեցի, նշվ. աշխ., հատ. 1, էջ 2, 4, 5, 16։

«Նրբաբար վիճաբանել»։ Նրա հայացքով աստվածաբանական կամ իմաստասիրական նյութ ունեցող գրական չափածո երկը միայն «ըստ եղանակի է» բանաստեղծություն, իսկ ըստ էության աստվածաբանություն է կամ փիլիսոփայություն. սակայն դա չէ Էրզրումեցու պոետիկայի առաջատար խնդիրը։ Մեր տեսաբանը պահանջում է բանաստեղծության նյութ դարձնել հասարակական կյանքի և բնության երևույթները, բանական մարդու վսեմագույն բոլոր գործերը՝ լինի դա պատմական թե ժամանակակից, պատերազմական թե խաղաղական, իրական թե երևակայական, «եղեալս և բանաստեղծեալս»—ահա կարևորը։ Բանաստեղծը, ըստ Խ. Էրզրումեցու, այդ բոլորը կարող է իր երկի նյութ դարձնել պայմանով՝ որ կենտրոնում կանգնած լինի մարդը՝ որ է «մտաւոր», «բանական», որ ունի «բանս և միտս», բարձր «արարս մարդկայինս, եղեալս կամ հնարեցեալս»: Բանաստեղծի պարտքն է վեր հանել, ներկայացնել մարդու բարոյական և իմացական վսեմագույն հատկությունները, նրա առաքինությունները։

Բանականության դերի այսպիսի գնահատությունը բխում է Բուալոյի «Պոետիկայի» ոգուց, որը կլասիցիզմի գեղագիտական սկզբունքն է առհասարակ։ Բանականության դերի նման գնահատության մենք հանդիպում ենք նաև հայ հին փիլիսոփաների և մտածողների մոտ. «Աղբիւր արուեստից միտք են, խորհուրդ հանճարեղ՝ արարիչ արուեստից և արուեստք տնեցուցի մտաց»[15],— գրում է Անանուն Քերականը (VI դ.) Դիոնիսիոսի քերականության իր մեկնության համապատասխան գլխում։ Գեղարվեստական ստեղծագործության նրկատմամբ ռացիոնալիստական այս ըմբռնումը տեսական ավելի խոր մեկնաբանություն է ստանում հետագայում Հովհաննես Սարկավագի (XII դ.) մոտ, նրա հռչակավոր «Սարեկ» («Բան իմաստութեան») բանաստեղծության մեջ։ Այստեղ «պարզ երևում է,—գրում է Մ. Աբեղյանը,—որ եղել է ձգտում դեպի բնություն և ռացիոնալիզմ կրոնի մեջ, որով գլխավոր նշանակությունը տրվում է ոչ թե հայտնությանը, այլև բնության դիտողություններից բանականությամբ ձեռք բերված հիմարտություններին: Դրա արգասիքն է եղել արվեստի ծագման նոր տեսությունը և առհասարակ մի նոր արվեստի պահանջ»[16] (ընդգծումը իմն է — Շ. Ն.)։

Էրզրումեցին ընդհանրապես ազատական, այսինքն ոչ ծառայական արվեստներին (այդ թվում հատկապես բանաստեղծությանը) հասարակական, բարոյակրթական, դաստիարակչական մեծ դեր է վերապահում: Այդպիսի արվեստները, նրա հասկացողությամբ, «...կատարելագործեն զիմացականն մեր, քանզի են կատարելութիւնք իմացականին (այսինքն աստվածայինի—Շ. Ն.): Առնեն զմեզ պատուաւորս, գովելիս և հռչակաւորս... Օգնեն հասարակի բարւոյ, զի թիկունս հասանին հասարակութեան»[17]:

Ըստ մեր տեսաբանի, բանաստեղծությունը, որպես արվեստ, կոչված է մարդկանց առջև բացելու կյանքի լավ կողմերը, հեռու պահելու նրանց մոլորություններից, անազնիվ կրքերից, հորդորելու սեր, հույս, արիություն, մեծագործություն, այն ամենը, ինչ առինքնող է, բարձր, արժանավայել, այն

---

15 Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петербург, 1915, էջ 160։

16 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 60—61։

17 Խ. Էրզրումեցի, նշվ. աշխ., հատ. 1, էջ 4։

ամենը, ինչ նպաստավոր է հասարակությանը, ինչ կարող է ծառայել «հասարակի բարույն... »։

Զսէր վառէ և բորբոքէ, զսիրտ սիրով լցուցանէ,
Զփափագ ընդոստուցանէ և զնա սաստկացուցանէ,
Զյոյս կանգնէ, քաջալերէ և զնա զօրացուցանէ,
Զարիութիւն զարթուցանէ, տածէ զնա և պահպանէ։
Զերկչոտութիւն նա տարագրէ և զնա արտասահմանէ...[18]

Բարոյագիտական տեսական այս սկզբունքները գալիս են նաև Բուալոյից։ Վերջինս ողբերգության գերագույն իմաստն է համարում մարդկային առաքինությունների գերազանց մատուցումը։

Էրզրումեցին իր գեղագիտական սահմանումներով բանաստեղծությանը վերապահում է իմացական ուղղություն, ուղղություն, որը տանում է դեպի կոնկրետը, ճշմարիտը, իրականը, բանականը։ Նա պահանջում է ստեղծել բարձրաշունչ, վսեմ ու գեղեցիկ այնպիսի բանաստեղծություն, ուր իշիի բանականությանը ենթարկված ներդաշնակության զգացմունքը և բանաստեղծը հենց դրանով ազդել կարողանա բարձրաճաշակ ընթերցողի վրա, «ճշմարիտ և բարձր ճաշակ»։ *Այս գաղափարն է պաշտպանում նաև Բուալոն։ «Մտեք դեպի սրտերը տանող ուղին, գրավեցեք հանդիսատեսին հուզաբորբոք երգով»[19],—պահանջում է Բուալոն։ Այսպիսի «հուզաբորբոք» բանաստեղծության պահանջ է առաջադրում նաև էրզրումեցին.*

Զուարճ բերկրութիւն պատճառէ, զուրախութիւն յարուցանէ,
Զունկնդրիչ զուարճացուցանէ և իսկ զմայլեցուցանէ[20]։

Միայն չոր ու ցամաք գաղափարների կանոնիկ չափաբերված մատուցմամբ հնարավոր չէ «զուրախութիւն յուրացնել» և «զբաղձանս զարթուցանել»։ Բանաստեղծության նյութ դարձնելով մարդուն՝ իր լավագույն գործերով, բարձր բարոյականությամբ, բնությունը՝ իր երևույթներով, «զիղձս նոցին արտաբերելով», ուրախություն և տխրություն պատճառելով, բանաստեղծությունը ինքնին դուրս կգա բանականությամբ ներգործելու իր նշանաբանից և կներգործի նաև մարդու զգացմունքների, հոգու վրա։

Իհարկե, էրզրումեցին բացահայտորեն չի անդրադառնում այս հարցին, չի օգտագործում «հույզ», «զգացմունք», «հոգի» բառերը։ Սակայն նա բանաստեղծությունը դիտում է իբրև արվեստական ունակություն, որը «խորին խորհուրդս պարուրէ» և միաժամանակ «զսէր վառէ բորբոքէ», «ընդոստեցուցանէ», «խանդավառէ»։ Սա բանականությունը և զգացմունքը զուգադրելու մի ներքին գիծ է, որ զարգացնում է մեր տեսաբանը։

Այս երևույթը ունի նաև մի այլ պատճառ։ Զգացմունքայնությունը քնարական բանաստեղծության էությունն է, իսկ քնարական երգը՝ հայ դարավոր բանաստեղծության ոսկե ֆոնդը և XVIII դ. հայ բանաստեղծության ամենահարուստ տեսակը։ Հայ քնարական երգն ի սկզբանե իր մեջ միահյուսում է աստվածային և մարդկային, երկնային և երկրային միտքն ու հույզը, և նրա

---

[18] *Նույն տեղում, էջ 101։*
[19] Буало, Поэтическое искусство, М., 1957, *էջ 77։*
[20] *Խ. Էրզրումեցի, նշվ. աշխ., հատ. 1, էջ 101։*

երկար, տևական զարգացման ընթացքի մեջ են միայն այդ հույզերը բաժանվում, առանձնանում։ Սկսած V դ. երգերից, ներառյալ XVIII դ. երգերը, սկսած հայ հոգևոր, ծիսական բազմաբնույթ քնարական երգերից, շարականներից, ներառյալ սիրո, պանդխտության, կենցաղային, վշտի ու ուրախության, քաղաքական ազատասիրության քնարական երգերը՝ հագեցված են հուզականությամբ։ Էրզրումեցուն որքան էլ կաշկանդեր կլասիցիզմի ֆորմալ տրամաբանության սկզբունքը, որքան էլ նա խստությամբ կիրառեր ամեն ինչ բանականության ձայնին ենթարկելու կլասիցիզմի հիմնական օրենքը, այնուամենայնիվ չէր կարող անտեսել ազգային բանաստեղծության այս բնորոշ գիծը։

Էրզրումեցին իր տեսական սահմաններում շոշափում է նաև բանաստեղծության արվեստի հետ կապված այլ խնդիրներ, խոսում է բանաստեղծության հանգավորման, տաղաչափության, երաժշտականության և մանավանդ ներքին կառուցվածքի և հնարանքների մասին։

Բանաստեղծության արվեստի ներգործուն ուժը ապահովելու համար Էրզրումեցին պարտադրում է համեմատությունների և հակադրությունների եղանակը։ «Այլաբանութիւն», «նմանաբանութիւն», «փոխաբերութիւն», «անգրաբանութիւն»։ Նա մեծ կարևորություն է տալիս այլաբանությանը։ Դա ևս բխում է հայ քնարերգության դարավոր ավանդույթից։ «...Բանաստեղծութիւն սիրէ բարձրաթռիչ այլաբանութիւն»[21],—ասում է նա։ Այլաբանությունը, ըստ Էրզրումեցու, արտահայտչական այն միջոցներից մեկն է, որով բանաստեղծը կարողանում է համոզել և տարհամոզել, ծավալվել և ընդարձակվել՝ միայն թե դատողաբար. «Զիրս խորհելով գտանէ և շտեմարանաց հանէ»։

Բացասական թե դրական, ուրախ թե տխուր դեպքերն ու երևույթները կապակցված ու պատճառաբանված ներկայացնելու համար, ըստ Խ. Էրզրումեցու, բանաստեղծը պետք է դիմի համապատասխան օրինակների շտեմարանին և փաստերը մեկը մյուսի ետևից դուրս բերի այնտեղից, կանգնեցնի դեմ հանդիման, ապացուցի, կամ «ըստ իրողութեան», «զառարկութիւն լուծանի».

Յորժամ գովէ և դրուատէ, գովաբանէ և փառատրէ,
Հայի յամբարս գովասանաց ի տեղիս գովաբանութեանց,
Յորժամ խօսէ, արհամարհէ, վատաբանէ և պարսաւէ,
Նայի յամբարս պարսաւանաց ի տեղիս արհամարհանաց,
Եւ յորժամ համոզել տենչայ. հաւանեցուցանել ջանայ,
Հայի յամբարս համոզելոյ և հաւանեցուցանելոյ,
Բայց յորժամ տարահամոզէ և անհաւանեցուցանէ,
[Հայի] յամբարս տարահամոզելոյ և անհաւանեցուցանելոյ[22]։

Արիստոտելի և ապա Բուալոյի երեք միության՝ ժամանակի, գործողության և տեղի միասնության տեսությունը, բնականաբար, չէր կարող իր արտահայտությունը գտնել Էրզրումեցու պոետիկայում, սակայն բանաստեղծության կուռ, ներդաշնակ կառուցվածքի, նրա առանձին մասերի վերաբերյալ վերևում մեջ բերված պահանջները Էրզրումեցու մոտ որոշակիորեն գալիս են Բուալոյից, հետևաբար նաև Արիստոտելից։

---

[21] Նույն տեղում, էջ 15։
[22] Նույն տեղում, էջ 100։

Բանաստեղծության տեսակների, ենթատեսակների մասին Էրզրումեցու պատկերացումները հստակ չեն, սակայն դատելով բանաստեղծության նյութի, միջավայրի, կերպարների և գործողությունների վերաբերյալ նրա սահմանումներից, կարելի է անվերապահորեն նշել, որ մեր տեսաբանը առաջին հերթին ի նկատի ունի բարձրարվեստ էպիկական բանաստեղծությունը՝ կրոնական, պատմական ու ժամանակակից նյութով սյուժետավոր, կոմպոզիցիոն պոեմը՝ չափածո պատմությունը, վիպերգությունը, դյուցազներգությունը, ինչպես նաև քնարական բանաստեղծությունը՝ մեղեդի, ներբող, քնարական պոեմ կամ այլ ինչ։ Խ. Էրզրումեցին պահանջում է, որ բանաստեղծը հորինի կուռ տրամաբանական, ամբողջական և գեղեցիկ երկ։

Իր տեսական դրույթները շարադրելիս Խ. Էրզրումեցին աչքի առաջ է ունեցել բանաստեղծության այն տեսակները, որոնք եղել են ողջ միջնադարում և որոնք փոփոխվելով ու կատարելագործվելով, շարունակում էին ծնվել նաև XVIII դ., ինչպես նաև այնպիսի երկեր, որպիսիք ստեղծում էին արդեն կլասիցիզմի ներկայացուցիչները Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում։

Էրզրումեցին պաշտպանում է ֆրանսիական կլասիցիզմի տեսության նաև այն օրենքը, որի համաձայն արհամարհվում է «ցածր ժանրի» ստեղծագործությունը, «երգս և նուագս վավաշոտս», նաև կոմեդիա, դերասանություն կոչելով այն և հակադրում է «բարձր ոճի» բանաստեղծությանը. «Քանզի դերասանութիւն յանդիման կացուցանէ զանարգ և ցած արարս, իսկ բանաստեղծութիւն յանդիման կացուցանէ զընտիր և զվսէմ արարս»։ Բուալոն «ցածր ժանրի» գործ է համարում ֆրանսիական ժողովրդական ֆարսը։ Խ. Էրզրումեցին անուղղակիորեն մերժում է հայկական ժողովրդական թատերախաղերն ու հանդեսները, հավանորեն «Կարագյոզի թատրոնը», որի ազդեցությունը, ինչպես հայտնի է, գալիս էր հին ժամանակներից և հասնում XVIII—XIX դդ.։

Էրզրումեցու այն հայացքը, թե՝ «Իրք ցածր և անարդ, անպարկեշտք և անհամեստք ոչ ենթարկին բանաստեղծութեան», թե՝ սուտ ու վնասակար են «զերգս և զնուագս վավաշոտս»[23], միաժամանակ ուղղված է հայ ժողովրդական և աշուղական այն երգերի դեմ, որոնք լեցուն են բաց, կրքոտ ու աղատ նկարագրություններով ու պատկերներով։ «...Ուստի և յայտ է,—գրում է Խ. Էրզրումեցին,—թե բանաստեղծութիւն, որ ստէ, մոլորեցուցանէ, ածէ զմարդիկ ի յոռութիւնս և ի մոլորութիւնս, իրակէ զերգս և զնուագս վավաշոտս, ընդոստուցանէ և բորբոքէ զչար ցանկութիւն, յանդիման կացուցանէ զիրս անհամեստս, անպարկեշտս, զազիրս և աղտեղիս, պատմէ իրաց գարշելեաց և վավաշոտից և ապականէ զբարս երիտասարդաց—յոյժ խոտելի է»։ Բարձր ոճի, բարձր զաղափարների բանաստեղծություն և ցածր ոճի, անպարկեշտ, անհամեստ բանաստեղծություն ներհակ հասկացություններ եղել են նաև վաղ միջնադարյան հայ դասական գործնական և տեսական գրականության ներկայացուցիչների մոտ. «Ողբերգութիւն,—գրում է Ստեփանոս Սյունեցին,—դմխիթարական ասէ, զորս ի վերայ մեռելոց և կամ այլ ինչ թշուառութեան կրելոց առնեն։ Իսկ դիւցազնաբար՝ զյորդորականն ասէ և զքաջալերականն և զնկրրողականն՝ ի կենաց վախճանեցելոցն,—Իսկ «Զկատակերգութիւն աշխարհաւէն,—շարունակում է VIII դ. հայ տեսաբանը,—այսինքն վատ կենցաղավարելոցն և անարի և ծուլիցն և ընչասիրացն և ի վերայ այսպիսեացն զե-

[22] Նույն տեղում, էջ 15։

պերսականն և զհեզնականն սոնել նաոս և սոիշս, որպես ռամիկքն սովորաբար ստեղծանեն առ այնոսիկ»[24]:

Էրզրումեցու տեսական պատկերացումների համար, ինչպես տեսնում ենք, անմիջական հիմք են հանդիսացել մի կողմից՝ հայ հին գեղագիտական, փիլիսոփայական միտքը, հայ դասական գիտությունն ու արվեստը, մյուս կողմից՝ արևմտաեվրոպական կլասիցիզմի գեղագիտական հայացքները: Այդ բոլորի համար մայր աղբյուր է եղել հունա-հռոմեական դասական գրականությունը, *անտիկ մշակույթը, որի մի շարք կենսունակ հատկանիշների վերականգնման անհրաժեշտությունն էր զգացվում XVI—XVIII դդ. Արևմտյան Եվրոպայում, Ռուսաստանում և այլուր:* Արևմտաեվրոպական կլասիցիզմը պատմականորեն նպաստում է, որպեսզի XVIII դ. հայ իրականության մեջ վերակենդանացվեն գրական, ստեղծագործական այն ավանդները, որոնց մի զգալի մասը հնում հայ դասական գործիչները, փիլիսոփաները ու պատմագիրները արդեն յուրացրել էին անտիկ մշակույթից:

Ինքնին հասկանալի է, որ հայկական կլասիցիզմը այնպիսի խորություն ու ընդգրկում չէր կարող ունենալ, ինչպիսին ուներ արևմտաեվրոպականը և այլա ռուսականը. սակայն որպես անցման շրջանի գրական ուղղություն, որպես «քաղաքական-գրական ուղղություն» *(Էդ. Ջրբաշյան)*, կլասիցիզմը մի ընդհանուր դեր էր կատարում յուրաքանչյուր ժողովրդի ազգային կյանքի վերածննդի յուրովի կազմավորման ընթացքում: Հայկական կլասիցիզմը ի սկզբանե ունեցել է ազգային-կրոնական-քաղաքական ուղղություն: Կրոնա-քաղաքական ուղղությունը հայ գրականության մեջ գալիս է հնից: XVIII դ. արևմտաեվրոպական գրական կլասիցիզմի ազդեցությամբ այն զգալիորեն վերափոխվում է, ստանալով նոր հատկանիշներ, ազգային ինքնաճանաչման նոր նշանաբան: *Այդ նոր դերն է, ահա, որ ըմբռնում են XVIII դ. հայ հասարակական և մշակութային ասպարեզի առաջադեմ գործիչները, այդ թվում և Խ. Էրզրումեցին:*

Դրական այդ նոր ուղղության անուղղակի արտահայտությունը մենք նկատում ենք XVIII դ. հայ մտավոր կյանքի, գրականության վրա ընդհանրապես և հայ գրավոր գրաբար բանաստեղծության և նրա տեսության վրա՝ մասնավորապես: XVIII դ. հայ գրավոր գրաբար բանաստեղծությունը նոր, ազգային, դասական բանաստեղծության նախնական քայլն է, վաղ շրջանի հայկական կլասիցիզմի արտահայտությունը: Այդ բանաստեղծության առաջին խոշոր ներկայացուցիչները, ինչպես հայտնի է, Պաղտասար Դպիրն ու Պետրոս Ղափանցին են, որոնց քնարական արվեստի շատ բնորոշ գծեր՝ պասական պարզ ու գեղեցիկ լեզու, զուսպ, հանդիսավոր և զարդարուն ոճ, գաղափարական նպատակասլացություն, կանոնավոր տաղաչափություն ու հանգավորում, վսեմ ու գեղեցիկ գաղափարներ՝ վսեմ ու գեղեցիկ արտահայտչական ձևերի մեջ, տեսական, օրենսդրական կերպարանք են ստանում Խ. Էրզրումեցու գրչի տակ:

Այսպիսով, XVIII դ. բարձր զարգացման հասած աշուղական, ժողովրդական բանաստեղծությանը զուգահեռ մեզանում զարգանում է գրավոր, գրաբարալեզու բանաստեղծությունը, որը գաղափարախոսությամբ և արվեստով դրսևորում է նաև վերանորոգման շրջանի դասական գրականության, արվեստի

---

[24] Հ. Ադոնց, *նշվ. աշխ., էջ 193:*

հատկանիշներ և ունի կրոնա-քաղաքական, կրոնա-ազգային, ազատագրական մղումներ։ Այդ հատկանիշներով է գրավոր գրաբար բանաստեղծությունը անուղղակիորեն թեքվում դեպի կլասիցիզմը։

Հասկանալի է, որ որևէ ուղղություն, երբ այն պատմական հող ունի իր զարգացման համար, չի կարող սկիզբ առնել և հանգչել առանց փայլատակումների։ Պաղտասար Դպիրը, Պետրոս Ղափանցին, Խաչատուր Էրզրումեցին հայ կլասիցիստական ուղղության առաջին փայլատակումներն են XVIII դ.։ Նրանց հաջորդում են Մխիթարյան և ոչ-Մխիթարյան հայտնի բանաստեղծները և զարգացնում այն։

Թեև Մխիթարյան միաբանությունը, հիմնադրված լինելով XVIII դ. սկզբին, մեծ դեր է կատարում հայ դասական գրականության ու լեզվի, հայագիտության զարգացման, հայ իրականության մեջ արևմտաեվրոպական գիտության և մշակույթի սերմերը տարածելու ասպարեզներում, սակայն հայկական կլասիցիստական բանաստեղծության, հատկապես քնարական (մեղեդի, ներբող, երկտող և քառատող), ինչպես նաև ուսուցողական բանաստեղծության սկզբնավորման գործում առաջնակարգ դերը պատկանում է ոչ թե Մխիթարյան բանաստեղծներին՝ Մ. Ջախջախյան, Դ. Ավետիքյան, Ե. Թովմասյան, Ղ. Ինճիճյան, այլ Պաղտասար Դպրին, Պետրոս Ղափանցուն և Խաչատուր Էրզրումեցուն։ Մխիթարյան վերոհիշյալ բանաստեղծները, հանդես գալով XVIII դ. վերջերին և XIX դ. սկզբներին, մասամբ շեղում են հայ կլասիցիստական բանաստեղծության (բանաստեղծություն, որն իր հետ բերում էր միջնադարյան աշխարհիկ քնարերգության արվեստի կենսունակ շատ գծեր) սկզբնական շրջանի ընթացքը։ Այսուամենայնիվ, Պաղտասար Դպրի և Պետրոս Ղափանցու ազդեցությունը մի նեղ շառավիղով ներթափանցում է XIX դ.։ Ա. Բագրատունու, Հ. Ալամդարյանի, Հ. Վանանդեցու, Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի գրաբար երգերը Պաղտասար Դպրի և Պետրոս Ղափանցու քնարական ժառանգության հետագա զարգացումն են։

Մխիթարյան և ոչ-Մխիթարյան կլասիցիստական բանաստեղծությունը, դրամատուրգիան և դյուցազներգությունը, ինչպես հայտնի է, լայն թափով զարգանում են ավելի ուշ և տարբեր երանգներ ընդունելով հասնում են մինչև XIX դ. 50—60-ական թթ.։

Էրզրումեցուց 121 տարի հետո, 1839 թ. նշանավոր բանաստեղծ և գիտնական Է. Հյուրմյուզյանը տպագրում է իր «Առձեռն բանաստեղծութիւնը», որը դիտվում է իբրև հայկական կլասիցիզմի տեսական հիմքերի համեմատաբար լիարժեք, ամբողջական շարադրանք։ Է. Հյուրմյուզյանը կլասիցիզմի դիրքերից առաջադրում է ճշմարտության, բանականության և գեղեցիկ արվեստի վերաբերյալ այն դրույթները, որոնք մեզ ծանոթ են Էրզրումեցու պոետիկայից։ «Քանզի քերթողաց գլխաւորագոյն յոյժ նպատակին է զուարճացուցանել, խանդաղատել, ազդել զգացմունս վէհս և ի բաց մերժել զհոռութիւնս....»[25],—գրում է Հյուրմյուզյանը, հիշեցնելով մեզ Էրզրումեցու համապատասխան տողերը։ Պետք է հաշվի առնել նաև, որ Էրզրումեցին բանաստեղծության տեսությամբ հրապարակ է իջնում XVIII դ. սկզբներին, երբ ծաղկում էր արևմտաեվրոպական կլասիցիզմը, իսկ Հյուրմյուզյանն իր «Առ-

[25] Է. Հ յ ո ւ ր մ յ ո ւ զ յ ա ն, Առձեռն բանաստեղծութիւն, Վենետիկ, 1839, էջ 49։

ձեռն բանաստեղծությամբ» հանդես է դալիս XIX դ. 30-ական թթ. վերջերին, երբ արդեն խամրում էին արևմտաեվրոպական կլասիցիզմի վերջին ցոլքերը։ Այնպես որ կլասիցիզմը հայ իրականության մեջ սկիզբ է առնում ոչ թե XVIII դ. վերջերին, ինչպես ընդունված է մեր գրականագիտության մեջ, այլ XVIII դ. սկզբներին։

* * *

Խաչատուր Էրզրումեցու «Համառոտական իմաստասիրութիւն» գիտական-ուսուցողական բազմաբնույթ բանաստեղծության երկհատորյակը և նրա մեջ մեզ ամենից ավելի հետաքրքրող, այսպես կոչված պոետիկան հեղինակի ամենաարժեքավոր գործերն են։ Թերևս Խ. Էրզրումեցին գրանցում ևս աշխարհայացքային վճռական շրջադարձ չի կատարում, սակայն հայ հին և արևմտաեվրոպական ժամանակակից գիտության ու արվեստի ազդեցությամբ ձևավորված նրա գիտական, տեսական բազմաթիվ դրույթներն անուղղակիորեն խախտում էին միջնադարյան աստվածաբանական իմաստասիրության դիրքերը։ Աստվածաբանությունից թեքում դեպի ռացիոնալիզմը (առանց արմատական սահմանազատման), երկնային, երազային գաղափարներից դեպի բնության և մարդկային բանականության ճանաչողության գաղափարը և այդ դիրքերից գրականության և կյանքի կապի, առնչության տեսական հիմնավորումը ինքնին շատ ուշագրավ է։ Դա ներքնապես համահնչուն էր XVIII դ. համահայկական կրթական, լուսավորական այն պայքարին, որ նախընտրել էին հայ հասարակական մտքի և մշակույթի առաջավոր գործիչները՝ Իսրայել Օրիից մինչև Շահամիրյաններն ընկած ժամանակահատվածում։ Դա ներքնապես համահնչուն է հայ ժողովրդի ազատասիրական այն ձգտումներին, որոնց գրական արձագանքները շոշափելի են նաև XVIII դ. նախամխիթարյան շրջանի հայ գրավոր գրաբար բանաստեղծության մեջ։